ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ
ПРОЛЕТАРИИ ВСЕХ СТРАН СОЕДИНЯЙТЕСЬ!

ՓԱՌԱՊԱՆԾ ՀԻՍՆԱՄՅԱԿ

Հ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ

Լրացավ Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50 տարին։ Դա հայ ժողովրդի սոցիալական ազատագրության և ազգային վերածննդի փառապանծ տոնն է, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ճանապարհին ձեռք բերած պատմական հաղթանակների և նվաճումների հանրագումարը, լենինիզմի դաղափարներին նրա անսահման նվիրվածության մարտական ստուգատեսը։

Հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովուրդը դարեր շարունակ անհավասար և հերոսական պայքար է մղել օտարերկրյա ու սեփական կեղեքիչների դեմ, անցել դաժան փորձությունների և մաքառումների երկարատև ուղի։

Անցյալի ոչ մի արհավիրք, սակայն, չկարողացավ կոտրել հայ ժողովրդի ազատաբաղձ ոգին, առաջադիմելու նրա կամքը։

Պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը ցույց տվեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդների և ազգերի, այդ թվում՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուղիները։ Լենինիզմի լույսով պարզ դարձավ, որ ժողովուրդների ազգային-ազատագրությունը սոցիալական հեղափոխության բաղկացուցիչ մասն է։ Հայ աշխատավորները խորապես ըմբռնեցին պատմական նոր ժամանակաշրջանում իրենց խնդիրները, հանգեցին այն ճշմարտությանը, որ միայն դասակարգային անհաշտ կռիվը կարող է իրենց ազատագրություն բերել։ Ուստի, պատահական չէ, որ դարասկզբին հայ իրականության մեջ սկսված հակացարական, ազգային-ազատագրական շարժումներն անմիջապես ընթացան Անդրկովկասի և համայն Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական շարժման հետ զուգորդված։

Պրոլետարիատի ազատագրական կռիվն առաջ քաշեց հայ հեղափոխական գործիչների մի փայլուն համաստեղություն, որը բացառիկ անձնուրացությամբ նվիրվեց լենինյան գաղափարների հաղթանակի համար ծավալված դժվարին պայքարին։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության հերոսական պատմության էջերում ջնջնջելի կմնան Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակիցներ Իսահակ Լալայանցի, Ստեփան Շահումյանի, Բոգդան Կնունյանցի, Սուրեն Սպանդարյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի, լեգենդար Կամոյի և պրոլետարական հեղափոխության ուրիշ շատ անձնվեր գործիչների անունները։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ ողբերգություն ապրեց հայ ժողովուրդը։ Օգտագործելով պատերազմական իրադրությունը, երիտթուրքերի կառավարությունը, գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ հետևողական սադիզմով ու սառնարյունությամբ կենսագործեց արևմտահայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը մի այնպիսի ծավալով, որ անօրինակ էր նույնիսկ մարդկության ամբողջ պատմության մեջ։

Պատերազմի տարիներին բոլշևիկները հանդես էին դալիս հայ ժողովրդի պաշտպանությամբ։ 1916 թ. Վ. Ի. Լենինը դրում էր, որ 1914—1915 թթ. Հայաստանի և Կոստանդնուպոլսի համար Ռուսաստանի և Թուրքիայի միջև ծագած կոնֆլիկտը բացահայտ թալանչիական բնույթ ունի։ Լենինը խարազանում էր իմպերիալիստական կառավարություններին, որոնք ագահորեն ձգտում էին զավթել հայկական հողերը, առանց հաշվի առնելու այդ հողերի իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին։

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները մերկացնում էին ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականությունը, նրա թշնամական դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ։ Վ. Ի. Լենինը գրում էր, որ այդ կառավարությունը «պատերազմի կառավարություն է, իմպերիալիստական սպանդը շարունակելու կառավարություն, կողոպուտի կառավարություն, որն ուզում է կողոպտել Հայաստանը»[1]։

1917 թ. ապրիլին, բոլշևիկների կուսակցության կոնֆերանսում Վ. Ի. Լենինը ի լուր ամենքի հայտարարում էր. «Եթե վաղը սովետն իշխանությունն իր ձեռքը վերցնի..., այն ժամանակ մենք կասենք Գերմանիա՛, զորքերդ դուրս Լեհաստանից, Ռուսաստա՛ն, զորքերդ դուրս Հայաստանից»[2]։

Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում բոլշևիկների կուսակցությունը բաց չէր թողնում առիթը մասսաներին բացատրելու ռուսական պետության սահմաններում բնակվող մյուս ազգերի նկատմամբ բոլշևիկյան քաղաքականության իմաստը։ 1917 թ. մայիսին Լենինը նշում էր, որ սովետների իշխանության հաղթանակից հետո «վելիկոռուսները բռնորեն չեն պահի ոչ Լեհաստանին, ոչ Կուրլանդիային, ոչ Ուկրաինային, ոչ Ֆինլանդիային, ոչ Հայաստանին»[3]։ Սովետների համառուսաստանյան առաջին համագումարում բոլշևիկներն առաջ են քաշում Հայաստանը անկախ դեմոկրատական հանրապետություն հռչակելու պահանջը։

1917 թ. գարնանն ու ամռանը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և Հայաստանի ուրիշ վայրերում ստեղծվեցին բանվորների, գյուղացիների, զինվորների դեպուտատների սովետներ։ Զինված լենինյան գաղափարներով, Հայաստանի բոլշևիկները գլխավորում էին աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, որը նշանավորեց մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը, Հայաստանի աշխատավորներին վճռական պայքարի ոգեշնչեց հանուն սովետական իշխանության։ Մեծ Հոկտեմբերը բացեց հայ ժողովրդի ազատության ուղին, նրա համար պայմաններ ստեղծեց իրագործելու ազատության ու անկախության մասին նրա դարավոր երազանքը։

Հայաստանի աշխատավորները ջերմորեն ընդունեցին Սովետական Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության առաջին դեկրետներն ու հրամանագրերը։ 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակվեց ՌՍՖՍՀ Ժողկոմսովետի դեկլարացիան, որով ազդարարվում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 410։

2 Նույն տեղում, հ. 24, էջ 367։

3 Նույն տեղում, էջ 440։

ների իրավական հավասարությունը, նրանց տրվում էր ազատ ինքնորոշման իրավունք։ Վերացվում էին ամեն տեսակի ազգային ու կրոնական սահմանափակումներն ու արտոնությունները։

1917 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը Լենինի ստորագրությամբ ընդունեց «Թուրքահայաստանի» մասին դեկրետը, որով ճանաչվեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը։ Դեկրետում միաժամանակ ռեալ երաշխիքներ էին տրվում դեմոկրատական սկզբունքներով հայ ժողովրդի միասնական անկախ պետականության ստեղծման համար։

Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության դրոշը առաջինը բարձրացրեց Բաքվի բազմազգ պրոլետարիատը։ 1918 թ. ստեղծվեց Բաքվի կոմունան, որը հերոսական պայքար էր մղում ներքին հակահեղափոխության և օտարերկրյա ինտերվենտների միացյալ ուժերի դեմ։ Անհավասար մարտերում կոմունան ընկավ, նրա քաջարի ղեկավարներ Ստեփան Շահումյանը, Ալյոշա Ջափարիձեն, Մեշագի Ալիզբեկովը, Իվան Ֆիոլետովը և մյուսները գազանաբար գնդակահարվեցին անգլո-էսէռական դահիճների ձեռքով։

Բաքվի կոմունայի հերոսական օրերին տեղի ունեցան Սարղարապատի, Բաշ-Ապարանի, Ղտրաքիլիսայի ժողովրդական հերոսամարտերը թուրքական նվաճողների դեմ։ Այդ համաժողովրդական պայքարը կանխեց հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը և միաժամանակ լուրջ օգնություն հանդիսացավ Բաքվի կոմունային։

1918 թ. մայիսին դաշնակցականները Հայաստանը հայտարարեցին «անկախ» հանրապետություն։ Իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում դաշնակցականների իշխանությունը նոր աղետներ բերեց հայ ժողովրդին։ Հայաստանը վերածվեց ողբի ու որբի երկրի։

Հայաստանի աշխատավորները բոլշևիկների գլխավորությամբ դժվարին ու համառ պայքար ծավալեցին դաշնակցականների հակաժողովրդական ռեժիմի դեմ, հանուն սովետական կարգերի հաղթանակի։ Սովետական իշխանության համար Հայաստանի աշխատավորների մղած պայքարի պատմության մեջ պանծալի էջ է 1920 թ. Մայիսյան ապստամբությունը՝ Անդրկովկասի հեղափոխական շարժման խոշոր իրադարձություններից մեկը։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ Դաշնակցական կառավարողները հաշվեհարդար տեսան նրա հարյուրավոր մասնակիցների հետ։ Հերոսաբար զոհվեցին բոլշևիկյան կուսակցության անվեհեր մարտիկներ Ստ. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Սարուխանյանը, Ե. Սևյանը, Վ. Ալեքսեևը, Ե. Մկրտումյանը և ուրիշներ։

Չնայած դաժան տեռորին, պրոլետարական հեղափոխության բոցը Հայաստանում չմարեց։

Սովետական իշխանության համար մղվող պայքարի վճռական պահին՝ 1920 թ. ամռանը, ձևավորվեց Ռուսաստանի կոմունիստական բոլշևիկների կուսակցության անբաժան ջոկատներից մեկը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը։ Դա պատմական խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։ Անցնելով Հայաստանի աշխատավորների քաղաքական պայքարի գլուխ, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը առաջնորդեց նրան դեպի սովետական իշխանության հաղթանակը։

1920 թ. աշնանը թուրքական արշավանքի հետևանքով հայ ժողովրդի առջև նորից կանգնեց լինել-չլինելու հարցը։ Գրավելով Հայաստանի տերիտորիաները և կոտորելով ժողովրդին, թշնամին մոտենում էր Երևանին։ Անհրաժեշտ էր հայ ժողովրդին փրկել վերջնական կործանումից։ Իսկ փրկության միայն մի ճանապարհ կար՝ երկրում սովետական կարգեր հաստատել։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի հյուսիսային շրջանների՝ Իջևանի և Դիլիջանի աշխատավորները ղինված ապստամբություն սկսեցին դաշնակցական կառավարության դեմ։ Կազմվեց Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե, որի մեջ մտան Ս. Կասյանը (նախագահ), Ա. Նուրիջանյանը, Ա. Բեկզադյանը, Ի. Դովլաթյանը, Ա. Մոավյանը, Ս. Տեր-Գտբրիելյանը։ Նույն օրը ռազմա-հեղափոխական կոմիտեն ժողովրդին ուղղված դեկլարացիայով Հայաստանը հայտարարեց սովետական։

Շատ տարիներ են անցել այդ պատմական օրերից, բայց այսօր էլ չի կարելի առանց հուզմունքի կարդալ մեծ առաջնորդին հասցեագրված Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի նամակը. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակների կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում սկսված անարխիայի խորացումից, բարձրացրին ապստամբության դրոշը... Ոգևորված ապստամբները շարժվում են առաջ, ատելի թշնամուն՝ Անտանտի գործակալին, վերջնականապես տապալելու համար։ Եվ, կատարելով նրանց կամքը, մենք, կազմելով հեղկոմ, առաջ ենք շարժվում, լի հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը, ցույց կտա մեզ իրական օգնություն մեր այս ղժվարին պայքարում։ Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք Ժողկոմսովետին ցույց տալ այդ օգնությունը»։

Վ. Ի. Լենինի առաջադրանքով Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի զորամասերն անհապաղ օգնության եկան Հայաստանի աշխատավորներին, Հայաստանում ամրապնդվեց սովետական իշխանությունը։

Ստանալով Հայաստանում սովետական կարգերի հաստատման լուրը, Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունեց «իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»[1]։

Դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի լծից Հայաստանի ազատագրմամբ հաղթականորեն ավարտվում է ներքին կեղեքիչների և օտարերկրյա բազմաթիվ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած երկարատև ու հերոսական պայքարը, հիմք է դրվում Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը, սկսվում է հայ ժողովրդի վերածննդի, ազատ և անկախ կյանքի նոր գարաշրջանը։

Իր գոյության առաջին օրերից սովետական իշխանությունը արմատական միջոցառումներ ձեռնարկեց Հայաստանը տնտեսական ծայրաստիճան քայքայումից դուրս բերելու, նորաստեղծ հանրապետության ներքին ու արտաքին դրությունն ամրապնդելու համար։ Ազգայնացվեցին հողը, նրա ընդերքը, արդյունաբերությունը, բանկերը, տրանսպորտը, կապը։ Ստեղծվեց Հայաստանի սովետական պետական ապարատը, կազմավորվեցին բանվորա-գյուղացիա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 550։

կան իշխանության տեղական օրգանները՝ սովետները։ 1922 թ. փետրվարին Հայաստանի սովետների առաջին համագումարում հաստատված Սովետական Հայաստանի առաջին սահմանադրությունը օրենսդրորեն ամրապնդեց հայ ժողովրդի Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական կառուցվածքը։

Նորաստեղծ հանրապետությունը, սակայն, միայնակ անկարող էր բուժել ծանր վերքերը, վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը։ Սովետական Ռուսաստանի տնտեսական, ռազմա-քաղաքական, դիվանագիտական անշահախնդիր օգնությունը, ինչպես նաև սովետական շինարարության ասպարեզում ՌՍՖՍՀ փորձի օգտագործումը դարձան երիտասարդ Սովետական Հայաստանի ներքին ու արտաքին դժվարությունները հաղթահարելու հզոր միջոց։

Վ. Ի. Լենինն օրավուր հետևում էր անդրկովկասյան նորաստեղծ հանրապետությունների ամրապնդմանն ու զարգացմանը։ Ծրագրային նշանակություն ունեցավ մեծ առաջնորդի 1921 թ. ապրիլի 14-ի «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի Լեռնային Հանրապետության ընկեր-կոմունիստներին» հղած նամակը, ուր նշված էին Կովկասի, այդ թվում Հայաստանի աշխատավորության կարևորագույն խնդիրը՝ սովետական իշխանության ամրապնդման, տնտեսության վերականգնման և զարգացման ուղղությամբ։

Անշեղորեն հետևելով Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումներին և պատգամներին, Հայաստանի աշխատավորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պատմական կարճ ժամանակամիջոցում վերականգնեցին ժողովրդական տնտեսությունը, ապա ձեռնամուխ եղան սոցիալիզմի կառուցման գործին։ Հնգամյակների տարիներին բուռն վերելք ապրեցին Հայաստանի ժողովրդական տնտեսությունն ու կուլտուրան։ Հանրապետությունում ստեղծվեց ժամանակակից հզոր արդյունաբերություն, իրականացվեց գյուղատնտեսության կոոպերացման Լենինյան ծրագիրը, բարձրացավ աշխատավորության նյութական մակարդակը, ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության անխախտ դաշինքը։

Սոցիալիստական շինարարության տարիներին կոմունիստական կուսակցությունը հետևողականորեն աճեցնում և դաստիարակում էր նոր մարդուն։ Շահագործողական դասակարգերի ոչնչացմամբ և սոցիալիզմի հաղթանակով ձևավորվեցին ՍՍՀՄ սոցիալիստական ազգերը, այդ թվում հայ աշխատավորական ազգը։ 1936 թ. ընդունվեց ՍՍՀՄ սահմանադրությունը՝ հաղթանակած սոցիալիզմի սահմանադրությունը։

Սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքի բուռն պրոցեսն ընդհատվեց մեր երկրի վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումով։ Պատերազմը սպառնալիքի տակ դրեց ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների ազատությունն ու անկախությունը, Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները։ Սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը հայրենական պատերազմի ելավ պաշտպանելու սոցիալիստական հայրենիքը, ջախջախելու ոխերիմ թշնամուն։

Կուսակցության կոչով Հայրենիքի պաշտպանների շարքերը համալրեցին հարյուրհազարավոր հայ մարտիկներ։ Ռազմաճակատներում և թիկունքում հայ ժողովուրդը ֆաշիզմի դեմ մահացու դոտեմարտում ցուցադրեց իր հավա-

տարմությունը կոմունիստական կուսակցությանը, սովետական կառավարությանը, մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդների եղբայրական դաշինքին։

Ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, ուզբեկների, ղազախների, վրացիների, լատիշների, ադրբեջանցիների, ՍՍՀՄ մյուս ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի հայ զինվորները հերոսաբար պաշտպանեցին Մոսկվան ու Լենինգրադը, կռվեցին Բրեստի ու Կիևի, Օդեսայի ու Սևաստոպոլի համար, մարտեր մղեցին Ստալինգրադի պարիսպների տակ և Հյուսիսային Կովկասի տարածքներում, Կուրսկի աղեղում ու Դնեպրի ափին, մասնակցեցին Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթյան հանրապետությունների, Մոլդավիայի ազատագրմանը, պատվով կատարեցին իրենց ինտերնացիոնալ պարտքը հարազատ երկրի սահմաններից դուրս։ Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը ստեղծեց իր ազգային զորամասերը, որոնք իրենց մարտական դրոշները պսակեցին անթառամ փառքով։ Ֆաշիզմի ջախջախման գործին իր ակտիվ մասնակցությունը բերեց նաև հայ ժողովրդի արտասահմանյան հատվածը։ Հիտլերյան օկուպացիայի տարիներին հազարավոր հայ հայրենասերներ ակտիվորեն մասնակցեցին Ֆրանսիայի, Հունաստանի, Բուլղարիայի և այլ երկրների հակաֆաշիստական շարժմանը։

Բազմաթիվ հայ բարձրաստիճան զինվորականներ, այդ թվում՝ ավելի քան 60 գեներալներ, պատերազմի ընթացքում իրենց դրսևորեցին որպես զորքերի և մարտական գործողությունների տաղանդավոր կազմակերպիչներ։ Դրանց թվում էին Սովետական Միության մարշալ Ի. Ք. Բագրամյանը, Սովետական Միության նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակովը, զրահատանկային զորքերի մարշալ Հ. Խ. Բաբաջանյանը, ավիացիայի մարշալ Ա. Ս. Խուդյակովը (Խանֆերյանց), հրետանու գեներալ-գնդապետ Մ. Ա. Պարսեղովը, գեներալ-լեյտենանտներ Ս. Ֆ. Գալաջևը, Ս. Ս. Մարտիրոսյանը, Գ. Լ. Թումանյանը և շատ ուրիշներ։

Բազմաճակատներում ցուցաբերած արիության ու խիզախության համար մոտ 70 հազար հայ ռազմիկներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով և մեդալներով, իսկ 103 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի կոչման։

Հայաստանի տնտեսությունը և կուլտուրան նոր, էլ ավելի հուժկու վերելք ապրեց հետպատերազմյան տարիներին։ Միայն 1950—1965 թթ. հանրապետությունում կառուցվեց և շահագործման հանձնվեց ավելի քան 300 արդյունաբերական նոր ձեռնարկություն ու խոշոր արտադրամաս։ Արդյունաբերության զարգացումը նպաստեց բանվոր դասակարգի աճին։ Ընդամենը յոթ տարում (1959—1965 թթ.) Հայաստանում բանվորների և ծառայողների թիվը ավելացավ 258 հազար մարդով կամ 69 տոկոսով։ Հետպատերազմյան տարիներին մեծ աշխատանքներ կատարվեցին հանրապետության փոքր քաղաքներում, շրջանային կենտրոններում և առանձին գյուղերում արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման ուղղությամբ։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման տեմպերի ու մասշտաբների մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ 1970 թ. նրա արդյունաբերության արտադրանքը 1913 թ. մակարդակը կգերազանցի ավելի քան 180 անգամ։ Սովետական Հայաստանն այսօր աշխարհի 70 երկրներ է արտահանում արդյունաբերական արտադրանքի շուրջ 150 տեսակներ։

Հետպատերազմյան տարիներին մեծ զարգացում ապրեց Հայաստանի գյուղատնտեսությունը։

Հանրապետության գյուղատնտեսության ընդլավառի աշխատողները շարունակում էին հաջողությամբ կենսագործել ոռոգման վերաբերյալ մեծ Լենինի դատողությունները։ Պետությունը հսկայական միջոցներ էր հատկացնում ջրաշինարարական աշխատանքներին։ Եթե 1950 թ. այդ նպատակի համար հանրապետությունում ծախսվել է 2,3 միլիոն ռուբլի, ապա 1969 թ.՝ 27,3 միլիոն ռուբլի։ Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում հաջողությամբ իրագործվում է գյուղատնտեսության ինտենսիֆիկացման, քիմիացման, էլեկտրիֆիկացման, հողագործության և անասնապահության կուլտուրայի հետագա բարձրացման ծրագիրը։

Սովետական Հայաստանը համատարած դրագիտության, զարգացած կուլտուրայի, առաջավոր գիտության երկիր է։

Սոցիալիստական, ինդուստրիալ Հայաստանն իր արժանի ներդրումն է կատարում մեր երկրում կոմունիզմի կառուցման համաժողովրդական գործում, փառաբանվում է իր որդիների ու դուստրերի աշխատանքային հերոսություններով։ Ժողովրդական տնտեսության բնագավառներում ձեռք բերած հաջողությունների համար Հայկական ՍՍՀ-ն պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով։

Հայ ժողովրդի սոցիալիստական հանրապետության հսկայական առաջընթացը, կյանքի բոլոր բնագավառներում Սովետական Հայաստանի աշխատավորների պատմական նվաճումները ոգեշնչման անսպառ աղբյուր են աշխարհով մեկ սփռված մեր եղբայրների և քույրերի համար։ Սփյուռքահայությունը Սովետական Հայաստանի պայծառ իրականության մեջ է տեսնում իր երազանքների ու տենչերի մարմնավորումը։ Սովետական Հայաստանն իր գոյությամբ ու առաջընթացով, պատմական իր հաղթանակներով կենարար ավյուն է ներարկում գաղութահայությանը, նպաստում է ազգային գոյության համար նրա մղած դժվարին պայքարին։

Միայն սովետական կարգերի պայմաններում հնարավոր եղավ հայ ժողովրդի հայրենաբաղձ զավակներից շատերի վերադարձը հայրենիք։ Վերածնված Հայաստանը մի անմար ջահ է մեր ժողովրդի տարագիր հատվածի համար։ Հարազատ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության բազմակողմանի օժանդակության պայմաններում անցած 50 տարում Սովետական Հայաստանի կառավարության ջանքերով աշխարհի 30 երկրներից հայրենիք եկան մոտ երկու հարյուր հազար հայեր։ Հարազատ միջավայրում, հաղթանակած սոցիալիզմի երկրում նրանք ստացան ստեղծագործ աշխատանքի ու երջանիկ կյանքի բոլոր պայմանները, ակտիվորեն ընդգրկվեցին հանրապետության տնտեսական ու կուլտուրական շինարարության մեջ, կարողացան բազմակողմանիորեն զարգացնել իրենց ունակություններն ու տաղանդը։

Հայաստանի և Սովետական Միության մյուս ազգային հանրապետությունների պայծառ ներկան ճնշված ազգերի համար ակնառու, համոզիչ օրինակ է այն բանի, թե ինչ է բերում սոցիալիզմն աշխատավոր մասսաներին, թե ինչ բարձունքների են նրանց առաջնորդում մարքսիզմ-լենինիզմի անմահ գաղափարները։ Կյանքի բոլոր բնագավառներում Սովետական Հայաստանի աշխատավորների անօրինակ նվաճումները սովետական ժողովրդի եղբայրական փոխադարձ օգնության անմիջական պտուղներն են, Սովետական Միության

կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության փայլուն դրսևորումները։ Հայ ժողովուրդը, ինչպես միշտ, այսուհետև նույնպես աչքի լույսի պես կպահպանի եղբայրական դաշինքը ռուս մեծ ժողովրդի, մեր բազմազգ երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների հետ, որպես ամենաթանկագին հարստություն։

СЛАВНОЕ ПЯТИДЕСЯТИЛЕТИЕ

Г. Р. СИМОНЯН

Резюме

В многовековой истории армянского народа новую эру открыла Великая октябрьская революция. Под влиянием Октября трудящиеся Армении поднялись на борьбу за советскую власть. В этой борьбе большевики Армении получали неоценимую помощь и поддержку молодой советской республики России. После установления 29 ноября 1920 г. советской власти в Армении компартия республики возглавила борьбу трудящихся за ликвидацию тяжелых последствий империалистической войны и господства дашнаков, за создание основ социалистической экономики. За короткий исторический срок Армения стала развитой индустриально-аграрной республикой, где была осуществлена культурная революция. В годы Великой отечественной войны армянский народ на фронтах и в тылу проявил беспредельную преданность социалистической Отчизне и внес достойный вклад в дело разгрома общего врага—фашизма.

Послевоенные годы стали годами дальнейшего подъема Советской Армении. Претворяя в жизнь великие предначертания Коммунистической партии и Советского правительства, трудящиеся Армении создали мощную базу для поступательного движения к коммунизму. Советская Армения вышла на самые передовые рубежи современного развития.

Ныне армянский народ, находясь в расцвете своих творческих и духовных сил, со всеми братскими народами СССР празднует 50-летие своего возрождения и с новыми трудовыми и творческими успехами идет навстречу XXIV съезду родной Коммунистической партии.